

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/
ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА**

<https://doi.org/10.59546/18290744-2023.10-12-3>

ԿԱՐԵՆ ԱՄԻՐՅԱՆ

*ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի
տեսության ու պարմության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու
ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ*

*ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն
քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության փորձագետ*

KAREN AMIRYAN

*Judge of the Appellate Anti-Corruption Court of the RA,
Assistant at YSU Faculty of Law, Chair of Theory and History of
State and Law, Candidate of Law*

ANNA STEPANIAN

*Expert of the Anti-corruption Policy Development and Monitoring,
Department of the RA Ministry of Justice*

КАРЕН АМИРЯН

*Судья Апелляционного антикоррупционного суда РА,
Ассистент кафедры теории и истории государства и права ЕГУ,
кандидат юридических наук*

АННА СТЕПАНИЯН

*Эксперт отдела разработки и мониторинга антикоррупционной
политики Министерства юстиции РА*

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱԿՏԵՐՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ՝
ՀՀ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**THE NECESSITY AND FEATURES OF INTRODUCTION AND APPLICATION
OF ANTI-CORRUPTION EXPERTISE AS A MECHANISM FOR ASSESSING
CORRUPTION RISKS IN LEGAL ACTS IN THE RA LEGAL SYSTEM**

НЕОБХОДИМОСТЬ И ОСОБЕННОСТИ ВНЕДРЕНИЯ И ПРИМЕНЕНИЯ АНТИКОРРУПЦИОННОЙ ЭКСПЕРТИЗЫ КАК МЕХАНИЗМА ОЦЕНКИ КОРРУПЦИОННЫХ РИСКОВ В ПРАВОВЫХ АКТАХ В ПРАВОВОЙ СИСТЕМЕ РА

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հակակոռուպցիոն փորձաքննությունը և ներդրման անհրաժեշտությունը.

Ցանկացած իրավական համակարգում նախքան իրավական ակտի նախագծի՝ օրենքի մակարդակ բարձրացնելը կարևոր է համապարփակ գնահատել այդ ակտի նախագծում տեղ գտած իրավադրույթները: Ընդ որում՝ այդ գործընթացը ենթադրում է նախ ակտի գնահատում իրավական տեսանկյունից, այնուհետ՝ դրա ազդեցության գնահատում տարբեր ոլորտների վրա:

Մեր օրերում ոչ պակաս կարևոր է իրավական ակտերի նախագծերի՝ հակակոռուպցիոն գնահատման իրականացումը, որն առաջնահերթ իրականացվում է հակակոռուպցիոն փորձաքննության միջոցով:

Հակակոռուպցիոն փորձաքննություն ասելիս նախ հասկանում ենք իրավական ակտերի նախագծերի պատշաճ գնահատում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից՝ հասկանալու, թե որքանով են նախագծերում առկա իրավադրույթները զերծ կոռուպցիոն ռիսկերից: Այլ կերպ՝ հակակոռուպցիոն փորձաքննությունը նորմատիվ իրավական ակտերի և նորմատիվ իրավական ակտերի նախագծերի գնահատումն է՝ դրանցում կոռուպցիոն գործոնների բացահայտման և վերացման նպատակով¹: Այն նաև բնութագրվում է որպես ընդունված իրավական կանոնների ձևի և էության վերանայման գործընթաց, որը նպատակ է հետապնդում հայտնաբերել և նվազագույնի հասցնել ապագա կոռուպցիոն ռիսկերը²:

Կոռուպցիոն գործոններն իրենց հերթին նորմատիվ իրավական ակտերի դրույթներ են, որոնք սահմանում են իրավապահների հայեցողության անհիմն լայն շրջանակներ կամ ընդհանուր կանոններից բացառությունների անհիմն կիրառման հնարավորություն, ինչպես նաև անորոշ, դժվար կատարվող և (կամ) ծանրաբեռնված կարգավորումներ պարունակող դրույթներ, քաղաքացիներին և կազմակերպություններին ներկայացվող չարդարացված պահանջներ՝ դրանով իսկ պայմաններ ստեղծելով կոռուպցիայի դրսևորման համար³:

Իրավական ակտերի նախագծման փուլում կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը և գնահատումը հնարավորություն է տալիս դեռևս այդ սկզբնական փուլում կատարելու անհրաժեշտ փոփոխություններ, արդյունքում ընդունել կոռուպցիոն ռիսկերից զերծ կամ հնարավորինս զերծ իրավական ակտեր և ունենալ ճիշտ ձևավորվող իրավակիրառ պրակտիկա:

Նախագծերի հակակոռուպցիոն գնահատումը երաշխիք է մշակվող հակակոռուպցիոն

¹ Sѓu Anti-Corruption Assessment of Laws "Corruption proofing", South East Europe 2020, Jobs and Prosperity in a European Perspective, էջ 15, https://rai-see.org/wp-content/uploads/2015/06/Comparative_Study-Methodology_on_Anticorruption_Assessment_of_Laws.pdf /the link is available as of 21.08.2023/:

² Sѓu Անտիկորրուպցիոն փորձաքննությունը նորմատիվ իրավական ակտերի և նորմատիվ իրավական ակտերի նախագծերի գնահատումն է՝ դրանցում կոռուպցիոն գործոնների բացահայտման և վերացման նպատակով: Մեմորանդում, 2019 թ., էջ 4, <https://www.arhcity.ru/data/2397/ekspertize.pdf> /ссылка доступна на 21.08.2023/ :

³ Sѓu «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1205-Ն որոշումը, ընդունված՝ 22.10.2009 թ., ՀՀՊՏ 2009.11.04/55(721), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=54520> /հասանելի է 21.08.2023 թ. դրությամբ/:

քաղաքականությունների՝ գործնականում իրացման համար: Հակառակ պարագայում այս ոլորտում մշակվող ռազմավարությունները չեն ունենա ցանկալի ազդեցություն. ռազմավարական փաստաթղթերով ամրագրված, օրենսդրական ակտերի ընդունմանը վերաբերելի միջոցառումները կկատարվեն առանց ռիսկերի գնահատման և արդյունքում կունենանք կատարված միջոցառումներ, սակայն չենք ունենա հստակ երաշխիքներ առ այն, որ դրանց կատարումը կապահովի ևս մեկ առաջադիմական քայլի արձանագրում՝ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի տեսանկյունից:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

1. Ենթաօրենսդրական մակարդակում առկա իրավիճակը.

Այս առումով նախ հարկ է հիշատակել «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1205-Ն որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում)⁴:

Կարևոր է արձանագրել, որ Որոշումն իրավական տեսանկյունից չի կարող կիրառելի համարվել, քանի որ այն իրավական ակտը, որի հիման վրա այն գործել է և որում ամրագրված լիազորող նորմը պայմանավորել է այս ենթաօրենսդրական նորմատիվ ակտի ընդունումը, այլևս չի գործում: Թերևս միակ փաստաթուղթը, որով մինչև այժմ անդրադարձ է կատարվել իրավական ակտերի հակակոռուպցիոն գնահատման ապահովման ընթացակարգին, եղել է վերոնշյալ որոշումը:

Այս առումով ներպետական իրավական համակարգը բախվել է իրավիճակի, երբ չկա օրենքի մակարդակով ամրագրվածություն իրավական ակտերի նախագծերի՝ հակակոռուպցիոն գնահատման իրականացման անհրաժեշտության և դրանով պայմանավորված համապատասխան ընթացակարգերի ընդունման:

2. Հակակոռուպցիոն փորձաքննության և կարգավորման ազդեցության գնահատման տարբերակումը.

Նախ, հարկ է նշել, որ Որոշմամբ անդրադարձ է կատարվում նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատմանը: Իհարկե, ինչպես նշեցինք վերոգրյալում, մեր հիմնական խնդիրն է իրավական ակտերի նախագծերի՝ հակակոռուպցիոն պատշաճ գնահատում իրականացնելուն, սակայն այս առումով հարկ է նշել, որ հակակոռուպցիոն գնահատում ասելիս պետք է հստակ տարանջատել «փորձաքննություն» և «կարգավորման ազդեցության գնահատում» եզրույթները, քանի որ յուրաքանչյուրն իր հերթին գնահատման դրսևորում է:

Վերոնշյալ երկու եզրույթների՝ ներպետական իրավական համակարգում ինչպիսի ընկալում ունենալու հանգամանքի բացահայտման համար անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) որոշ դրույթներ: Մասնավորապես, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական-իրավական փորձաքննությունը իրականացվում է Սահմանադրությանը և սույն օրենքին նորմատիվ իրավական ակտի նախագծի համապատասխանությունը որոշելու նպատակով: Համա-

⁴ Տե՛ս «Կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը, ժամկետները և դեպքերը, դրա արդյունքում տրվող եզրակացությանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման Հավելվածի կետ 3-ը, հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=148376> /հասանելի է 21.08.2023 թ. դրությամբ/:

ծայն Օրենքի 2-րդ հոդվածի՝ կարգավորման ազդեցության գնահատումը (այսուհետ նաև՝ ԿԱԳ) նորմատիվ իրավական ակտի ընդունման արդյունքով հնարավոր փոփոխությունների վերլուծությունն, (...) է: ԿԱԳ-ն ընդգրկում է հետևյալ բնագավառները (ոլորտները)՝ գործարար միջավայրի և մրցակցության, հանրային ֆինանսների, սոցիալական, առողջապահության, շրջակա միջավայրի⁵:

Այսինքն՝ փորձաքննության պարագայում քննարկման առարկա են դառնում իրավական հնարավոր անհամապատասխանությունները, խնդիրները, ռիսկերը, իսկ ԿԱԳ-ն օգնում է կատարել ոչ թե իրավական բնույթի, այլ գործարար միջավայրին, մրցակցությանը, ֆինանսական, սոցիալական, առողջապահական ոլորտներին, շրջակա միջավայրին առնչվող ռիսկերի վերհանում:

Այդ է պատճառը, որ նախ պետք է հասկանալ, թե որ իմաստով է նպատակահարմար իրականացնել հակակոռուպցիոն գնահատում: Կարծում ենք, որ թեև Որոշմամբ ամրագրված կարգավորումները ունեն մի շարք խնդրահարույց կողմեր, սակայն, որպես այդպիսին, դրանում ամրագրված դրույթները կարող են բազային նշանակություն ունենալ այս հարցադրմանը պատասխանելու տեսանկյունից:

Թեև Որոշմամբ անդրադարձ է կատարվում նախագծերի՝ հակակոռուպցիոն ոլորտում կարգավորման ազդեցության գնահատմանը, սակայն դրանում ամրագրված դրույթները պարունակում են ոչ թե ԿԱԳ-ի, այլ փորձաքննության իմաստ:

3. Կոռուպցիոն հիմնական գործոնները՝ որպես հակակոռուպցիոն փորձաքննության ցուցիչներ.

Որոշման 9-րդ կետում մատնանշված, բացահայտման ենթակա գործոններից յուրաքանչյուրն իր բնույթով իրավական ազդեցություն ունեցող երևույթ է: Այսպես, 9-րդ կետում նշվում է, որ Նախագծի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման ընթացքում բացահայտման ենթակա կոռուպցիոն հիմնական գործոններն են պաշտոնատար անձանց իրավունքների ու պարտականությունների՝ որքանով հստակ լինելը, անձին՝ իր իրավունքների իրականացման համար ներկայացվող պահանջների՝ որքանով հիմնավորված լինելը, լիազորությունների՝ որքանով հայեցողական լայն շրջանակ ընդգրկելը, այդ թվում՝ որոշումների ընդունման ժամկետների և պայմանների, ինչպես նաև այլընտրանքային լիազորությունների դիտարկման համատեքստում, իրավական-լեզվաբանական առումով կոռուպցիոն ռիսկերի՝ որքանով առկա լինելը, պետական մարմիններին վերապահված գործառույթների՝ գործնականում որքանով կամայական մեկնաբանվելը, վարչական ընթացակարգերի՝ որքանով բացակայելը կամ ոչ հստակ կարգավորված լինելը, մրցութային (աճուրդային) անհրաժեշտ ընթացակարգերի՝ որքանով բացակայելը կամ ոչ հստակ կարգավորված լինելը, թույլ տրված իրավախախտման համար պետական կամ հանրային ծառայողի պատասխանատվության՝ որքանով բացակայելը, վերահսկողության, այդ թվում՝ նաև հանրային վերահսկողության՝ որքանով բացակայելը պետական մարմինների կամ պետական կամ հանրային ծառայողների նկատմամբ, հակակոռուպցիոն ոլորտի իրավական ակտերում՝ որքանով կեղծ նպատակների կամ գերակայությունների առկա լինելը, օրենքից ցածր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի կապակցությամբ իրավաստեղծ գործունեության որքանով ազատ լինելը՝ ոչ իրավաչափ լինելու համատեքստում (տվյալ դեպքում խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ հարցի կարգավորումը չի կարող ապահովվել ենթաօրենսդրական ակ-

⁵ Стів Стебенева Е.В., Антикоррупционная экспертиза нормативных правовых актов и их проектов как мера предупреждения правонарушений должностных и иных лиц, Вестник Санкт-Петербургского университета МВД России № 1 (97) 2023, էջ 3:

տով, քանի որ առկա չէ համապատասխան լիազորող նորմը), իրավական կարգավորման ձևի ընտրության՝ որքանով համապատասխան լինելը՝ այսինքն, այնպիսի իրավիճակի առաջ կանգնելու հարցի քննարկումը, երբ կոնկրետ հարաբերություններ պետք է կարգավորվեն օրենքի մակարդակով, սակայն կարգավորման առարկա են դառնում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:

Հետաքրքրական է այն, որ ռուս քրեագետ Ելենա Վիկտորովնա ևս իր աշխատության մեջ առանձնացնում է կոռուպցիոն այնպիսի հիմնական գործոններ, ինչպիսիք տեղ են գտել Որոշման մեջ: Մասնավորապես, ըստ վերջինիս՝ կոռուպցիոն հիմնական գործոններն են՝

- լիազորությունների անսահմանափակ ընդլայնումը՝ արտահայտված որոշում կայացնելու պայմանների կամ հիմքերի բացակայությամբ կամ անորոշությամբ: Անորոշությունն իր հերթին կարող է դրսևորվել պետական մարմինների, պաշտոնատար անձանց «կրկնօրինակվող» լիազորությունների առկայությամբ,

- պետական մարմինների և նրանց պաշտոնատար անձանց կողմից քաղաքացիների և կազմակերպությունների նկատմամբ գործողություններ կատարելու իրավունքի ազատ (ոչ իրավաչափ հայեցողությամբ) տնօրինման հնարավորությունը,

- իրավունքների շրջանակի փոփոխության անհիմն հնարավորությունը, պետական մարմինների և նրանց պաշտոնատար անձանց հայեցողությամբ քաղաքացիների և կազմակերպությունների համար ընդհանուր ընթացակարգերից բացառությունների սահմանումը,

- ենթաօրենսդրական ակտերի ընդունման չափից դուրս ազատությունը,

- վարչական ընթացակարգերի բացակայությունը կամ թերի լինելը, այն է՝ պետական մարմինների և նրանց պաշտոնատար անձանց կողմից որոշակի գործողություններ կատարելու համար կոնկրետ ընթացակարգերի բացակայությունը կամ սահմանված ընթացակարգերի թերի լինելը,

- մրցակցային (աճուրդի) ընթացակարգերից հրաժարվելը, այն է՝ ոչ իրավաչափ հայեցողությամբ իրավունքների տրամադրման վարչական ընթացակարգերի սահմանումը,

- անձի նկատմամբ իր իրավունքի իրականացման համար չափազանց մեծ պահանջների առկայությունը, այն է՝ քաղաքացիների և կազմակերպությունների համար անորոշ, դժվարին և ծանրաբեռնված պահանջների սահմանումը,

- իրավական և լեզվական անորոշությունը՝ գնահատողական բնույթի չկարգավորված երկիմաստ տերմինների և կատեգորիաների օգտագործման տեսքով⁶:

Ռուս իրավաբան-գիտնական Ե. Վ. Նաշյոկինայի կարծիքով՝ կոռուպցիոն հիմնական գործոններն են՝

- 1) պետական մարմինների իրավասությունից դուրս ակտերի մշակումը.

- 2) որոշում կայացնելու ժամկետների, պայմանների կամ հիմքերի բացակայությունը կամ անորոշությունը.

- 3) ընդհանուր ընթացակարգից բացառությունների անհիմն սահմանումը⁷:

Ինչպես երևում է վերոգրյալից, յուրաքանչյուր դեպքում իրավական ակտերի նախագծերի իրավական գնահատման ընթացքում նախ վերհանվում են իրավական տեսանկյունից խոչընդոտ հանդիսացող կոռուպցիոն գործոններ, հետևաբար, յուրաքանչյուր դեպքում նախ

⁶ Տե՛ս *Нашёкина Е.В.*, Значение антикоррупционной экспертизы в процессе формирования региональной нормативной правовой базы в дальневосточном федеральном округе, Вестник Хабаровского государственного университета экономики и права. 2020. № 1-2 (102–103), էջ 111:

⁷ Տե՛ս OECD/ACN second round of monitoring, Kazakhstan, Monitoring report 29 September, 2011, էջ 71 www.oecd.org/countries/kazakhstan/48908325.pdf /հասանելի է 21.08.2023 թվականի դրությամբ/

անհրաժեշտ է իրականացնել իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննություն:

Հետևաբար, անհրաժեշտ է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում կատարել անհրաժեշտ փոփոխություն և որպես իրավական ակտերի փորձաքննության առանձին տեսակ ամրագրել հակակոռուպցիոն փորձաքննությունը, այնուհետև Օրենքով ամրագրել լիազորող նորմ և դրա հիման վրա ընդունել համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ:

4. Հակակոռուպցիոն փորձաքննություն իրականացնելու լիազոր մարմինը.

Որոշման շրջանակում հակակոռուպցիոն գնահատման իրականացման իրավասությունը վերապահվել էր ՀՀ արդարադատության նախարարությանը: Կարծում ենք, որ այս կարգավորումը խնդրահարույց է այն առումով, որ եթե հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման իրավասությունը տրվի Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալությանը, ապա խնդիր կառաջանա այն առումով, որ կոնկրետ ուղղվածություն ունեցող փորձաքննության իրականացման համար առկա չեն համապատասխան բաժին և հակակոռուպցիոն ոլորտի մասնագիտացում ունեցող աշխատակիցներ, իսկ եթե փորձաքննությունն իրականացվի նախարարությունում հակակոռուպցիոն համապատասխան ստորաբաժանման՝ այն է Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության կողմից, ապա խնդիրներ կառաջանան այն դեպքերում, երբ հակակոռուպցիոն փորձաքննության առարկա դառնան այն նախագծերը, որոնք մշակվել են հենց տվյալ վարչության կողմից. բնականաբար այն մարմինը/մարմնի ստորաբաժանումը, որը մշակել է տվյալ նախագիծը, չի կարող իրականացնել այդ նախագծով հնարավոր ռիսկերի վերհանումը:

Հետևաբար, որպես լուծում առաջարկվում է ստեղծել առանձին մասնագիտացված անկախ մարմին, որին կվերապահվի հակակոռուպցիոն փորձաքննությունների իրականացման իրավասություն:

5. Հակակոռուպցիոն փորձաքննության ենթակա նորմատիվ իրավական ակտերի շրջանակը.

Փորձաքննություն իրականացնող սուբյեկտի որոշումից հետո կարևոր է հասկանալ, թե որ իրավական ակտերի նախագծերը պետք է անցնեն հակակոռուպցիոն փորձաքննություն:

Նշենք, որ Որոշմամբ ամրագրված էր, որ Հակակոռուպցիոն բնագավառում պարտադիր գնահատման ենթակա են «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 1-ին մասում նշված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը: «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանվում էր, որ Օրենքի նախագիծը մշակող մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության կամ Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ կազմակերպում է նախագծի կարգավորման ազդեցության գնահատումը: Ազգային ժողովի պատգամավորի կամ խմբակցության կողմից կամ քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջադրված և Ազգային ժողովի կողմից շրջանառված օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության կամ Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը կազմակերպում է նախագծի կարգավորման ազդեցության գնահատումը, որը կցվում է նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկություններին:

Ինչպես երևում է վերոգրյալից, ԿԱԳ-ի իրականացման համար անհրաժեշտ էր կառավա-

րության կամ վարչապետի հանձնարարությունը: Սակայն այստեղ առկա չէին այս հայեցողության իրացման իրավական սահմանները: Յուրաքանչյուր դեպքում հանձնարարությամբ հանդես գալու հայեցողությունն իրավաչափ չէր: Մասնավորապես, պարզ չէր, թե կոնկրետ դեպքում Կառավարությունը կամ Վարչապետն ինչը հիմք կընդունեն և կորոշեն, որ պետք է իրականացվի ԿԱԳ և որ դեպքում չեն տեսնի դրա իրականացման անհրաժեշտությունը: Այս հանգամանքը վերաբերում էր նաև հակակոռուպցիոն ԿԱԳ-ին (*հակակոռուպցիոն ԿԱԳ տերմինը կիրառվել է՝ հաշվի առնելով Որոշմամբ ամրագրված իրավական եզրույթը, սակայն հարկ է նշել, որ բովանդակային առումով յուրաքանչյուր դեպքում դիտարկում ենք հակակոռուպցիոն փորձաքննության իրականացումը*): Ընդ որում, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքը պետական-իրավական փորձաքննության իրականացումը նույնպես պայմանավորել է ոչ թե որևէ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի ցանկությամբ, այլ ակտի տեսակով:

Հետևաբար, գտնում ենք, որ հակակոռուպցիոն փորձաքննության ենթակա ակտերի շրջանակը կամ դրանց որոշման չափանիշը պետք է հստակ նախատեսված լինի օրենքի մակարդակով:

Որպես օրինակ նշենք, որ տարբերակված և չհիմնավորված մոտեցում էր որդեգրվել նաև Ղազախստանում⁸: Մասնավորապես՝ Ղազախստանի նախագահի օրենսդրական նախաձեռնությունները և նորմատիվ իրավական ակտերի նախագծերը չէին անցնում հակակոռուպցիոն պարտադիր ստուգում, որպիսի հանգամանքը քննադատվել էր Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ նաև՝ ՏՀԶԿ, Կազմակերպություն) կողմից: Կազմակերպության դիրքորոշումը ևս փաստում է, որ այս առումով որդեգրվելիք մոտեցումը պետք է նույնական լինի հակակոռուպցիոն ոլորտին առնչվող բոլոր նորմատիվ իրավական ակտերի համար:

Հակակոռուպցիոն փորձաքննության ենթակա իրավական ակտերի շրջանակը քննարկման առարկա դարձնելու համատեքստում կարևոր ենք համարում նաև անդրադառնալ պետաիրավական փորձաքննության ենթակա ակտերին և նշել, որ այս առումով օրենսդիրը պետք է զերծ մնա պետաիրավական փորձաքննության ենթակա ակտերի շրջանակով հակակոռուպցիոն փորձաքննության ենթակա ակտերի շրջանակը պայմանավորելու պրակտիկայից, քանի որ կան նորմատիվ իրավական ակտեր, որոնք թեև չեն անցնում պետաիրավական փորձաքննություն, սակայն կարող են իրենցում պարունակել կոռուպցիոն ռիսկեր: Այսպես, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 7-րդ հոդվածով սահմանված են փորձաքննության ոչ ենթակա նորմատիվ իրավական ակտերը: Ճիշտ է, չկա որևէ հիմնավորում դրանց՝ պետաիրավական փորձաքննության ենթակա չլինելու մասով, սակայն, այժմ հարցին անդրադառնանք կոնկրետ հակակոռուպցիոն փորձաքննության համատեքստում:

Հարկ է նշել, որ թեև 7-րդ հոդվածով սահմանված ակտերը չեն անցնում պետաիրավական փորձաքննություն, կարծում ենք, որ դրանք, այնուամենայնիվ, պետք է անցնեն հակակոռուպցիոն փորձաքննություն, որովհետև դրանցում, ըստ էության, կարող են առկա լինել կոռուպցիոն ռիսկեր պարունակող դրույթներ: Ասվածն առավել առարկայական ներկայացնելու համար նշենք, որ այդ ակտերն են պարտադիր պահուստավորման նորմատիվի կամ հատուկ տնտեսական նորմատիվների սահմանմանը, Կենտրոնական բանկի կողմից բանկային տոկոսի հաշվարկային դրույթի և բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը սահ-

⁸ Տե՛ս OECD/ACN second round of monitoring, Kazakhstan, Monitoring report 29 September, 2011, էջ 71 www.oecd.org/countries/kazakhstan/48908325.pdf /հասանելի է 21.08.2023 թվականի դրությամբ/:

մանելուն ուղղված՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումների նախագծերը, պետական և համայնքային բյուջեների վերաբաշխման, ինչպես նաև բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների վերաբերյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը: Փորձաքննության չեն ենթարկվում հանրաքվե կամ ընտրություններ նշանակելու վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև ընտրությունների ժամանակահատվածում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ իրավական ակտերի նախագծերը: Փորձաքննության չեն ենթարկվում սակագների, պարտադիր վճարների, դրանց դրույքաչափերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումների նախագծերը:

Նշվածների մեծ մասը Որոշման 9-րդ կետով ամրագրված հիմքերից որևէ մեկի առկայության ուժով իրենում կարող է պարունակել քողարկված կոռուպցիոն ռիսկ:

Իրականում կիրառելի է նաև այն մոտեցումը, որ բոլոր օրենքների նախագծերը և ընդունված օրենքները ենթարկվեն հակակոռուպցիոն ստուգման: Այս դեպքում նաև անհրաժեշտություն չի առաջանում սահմանելու հակակոռուպցիոն փորձաքննության ենթակա օրենքների ընտրության չափանիշներ⁹:

Վերոշարադրյալի հիման վրա եզրահանգումը միանշանակ է. պետք է լինի հստակ շրջանակ այն իրավական ակտերի, որոնք ենթակա կլինեն հակակոռուպցիոն փորձաքննության: Առաջարկում ենք հստակ սահմանել այն իրավական ակտերի շրջանակը և/կամ դրանց ընտրության չափանիշները, որոնք ենթակա կլինեն հակակոռուպցիոն փորձաքննության: Միևնույն ժամանակ, առաջարկում ենք դրանց շրջանակը պայմանավորել ոչ թե պետաիրավական փորձաքննության ենթակա ակտերով, այլ այն ռիսկերով, որոնք կարող են առաջանալ կարգավորման առարկա հանդիսացող հարաբերությունների ծագման, փոփոխման, դադարման ընթացքում:

6. Հակակոռուպցիոն փորձաքննության ներդրմանն ուղղված աշխատանքները և դրանցում առկա խնդիրները.

Աշխատանքի շրջանակում հարկ է անդրադառնալ նաև այն բարեփոխումներին, որոնք իրականացվում են ոլորտի քաղաքականության մշակման համար:

Նշենք, որ «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծով (այսուհետ նաև՝ Ռազմավարության նախագիծ, Նախագիծ)¹⁰ նախատեսվել է կատարելագործել իրավական ակտերի հակակոռուպցիոն գնահատման մեխանիզմները:

Մասնավորապես, Ռազմավարության նախագծի Գործողություն 1.7-րդ կետի (այսուհետ նաև՝ Գործողություն) շրջանակում նախատեսվել է իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության ապահովումը՝ այն է մշակվող ակտերի (ex ante) և անհրաժեշտ

⁹ Տե՛ս Anti-Corruption Assessment of Laws "Corruption proofing", South East Europe 2020, Jobs and Prosperity in a European Perspective, էջ 97, https://rai-see.org/wp-content/uploads/2015/06/Comparative_Study-Methodology_on_Anticorruption_Assessment_of_Laws.pdf /the link is available as of 21.08.2023/:

¹⁰ Տե՛ս «Հայաստանի հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, <https://www.e-draft.am/projects/5986> /հասանելի է 21.08.2023 թվականի դրությամբ/:

տության դեպքում՝ դրանց հիմքում ընկած կամ դրանց հետ փոխկապակցված իրավական ակտերի (ex post) փորձաքննության իրականացումը: Ինչպես երևում է վերոգրյալից, հակակոռուպցիոն փորձաքննությունը նախատեսվում է իրականացնել ոչ միայն հակակոռուպցիոն ոլորտի իրավական ակտերի նախագծերի, այլև ոլորտին առնչվող և գործողություն ունեցող օրենքների պարագայում: Այսինքն, օրենսդիրը, ոլորտի կարևորությամբ պայմանավորված, գտնում է, որ փորձաքննության անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև գործող օրենքների պարագայում, քանի որ օրենքների կիրառման ընթացքում կարող են առաջանալ այնպիսի իրավիճակներ, որոնք կարող են պայմանավորել հակակոռուպցիոն ոլորտի գործող իրավական ակտերի կոնկրետ դրույթներին գնահատական տալու անհրաժեշտություն: Ընդ որում, այսպիսի մոտեցումը խրախուսելի է նաև այն համատեքստում, որ Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի¹¹ 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձգտի պարբերաբար գնահատել համապատասխան իրավական փաստաթղթերը և վարչական միջոցները՝ կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի տեսանկյունից դրանց համարժեքությունը որոշելու նպատակով: Ռազմավարական մակարդակով այսպիսի մոտեցման որդեգրումը և ոչ միայն նախագծերի, այլև գործող օրենքների հակակոռուպցիոն փորձաքննությունների իրականացումը որպես կատարման ենթակա գործողություն սահմանելը ևս իր հերթին վկայակոչված կոնվենցիոն նորմի իրացման երաշխիք է, քանի որ այդպիսով հնարավորություն է ստեղծվում պարբերաբար գնահատելու համապատասխան իրավական ակտերը և ապահովելու կոռուպցիոն ռիսկերի գնահատում անցած ակտերի՝ ներպետական իրավական համակարգում անխոչընդոտ գործելը:

Գործողության շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ մինչև 2024 թվականի 1-ին կիսամյակն իրականացնել իրավական ակտերի նախագծերի փորձաքննության լավագույն մոդելի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն, ինչպես նաև հարցի առնչությամբ շահագրգիռ մարմինների հետ իրականացնել քննարկումներ: Մինչև 2024 թվականի 2-րդ կիսամյակը նախատեսվում է միջազգային փորձի հաշվառմամբ ընտրել իրավական ակտերի նախագծերի փորձաքննության կիրառելի մոդելը, ինչպես նաև սահմանել իրավական ակտերի նախագծերի փորձաքննության լիազոր մարմինը: 2025 թվականի ընթացքում նախատեսվում է զարգացնել իրավական ակտերի նախագծերի փորձաքննության լիազոր մարմնի կարողությունները:

Քննարկման հարցի շրջանակներում կարևոր ենք համարում նաև անդրադառնալ Ռազմավարության նախագծի Գործողություն 3.11 կետին: Այս գործողության շրջանակներում առաջարկվում է բուհերում հիմնել Հակակոռուպցիոն լաբորատորիաներ (R&D)՝ հակակոռուպցիոն հետազոտություններ, իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն անցկացնելու և հակակոռուպցիոն ծրագրերին հետազոտական և վերլուծական բնույթի այլ աջակցություն տրամադրելու նպատակով: Ինչպես երևում է վերոգրյալից, Ռազմավարության նախագծով սահմանվել է, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում հիմնված Հակակոռուպցիոն լաբորատորիաներում, ի թիվս այլնի, պետք է իրականացվի իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն: Ընդ որում, Նախագծով սահմանվել է, որ որպես իրականացված նպատակ, պետք է բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդհանուր թվի 30 տոկոսում առկա լինեն հակակոռուպցիոն լաբորատորիաներ:

¹¹ Տե՛ս «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ընդունված՝ 31.10.2003թ., <https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021> /հասանելի է 21.08.2023 թվականի դրությամբ/:

Այս համատեքստում կարևոր է հստակեցնել, թե ովքեր պետք է ներգրավված լինեն տվյալ լաբորատորիաներում: Այսինքն՝ տվյալ կառույցներում պետք է ներգրավված լինեն բացառապես ուսանողներ, թե նաև դասախոսներ: Այս հանգամանքի հստակեցումը կարևոր է նախ այն առումով, թե ինչ որակի փորձաքննության տրամադրում կարելի է ակնկալել: Այնուհետ, կարևոր է հասկանալ, թե ինչպես են օգտագործվելու համալսարաններում իրականացված փորձաքննությունների արդյունքները:

Առհասարակ հարկ է նշել, որ օրենսդրական ակտերի (դրանց նախագծերի) հակակոռուպցիոն փորձաքննությունը կարելի է բաժանել երկու տեսակի.

Պետական, որն իրականացվում է պետական մարմինների և պաշտոնյաների կողմից և անկախ, որն իրականացվում է քաղաքացիական հասարակության ինստիտուտների և քաղաքացիների կողմից: Անկախը, իր հերթին, կարող է լինել սոցիալական և գիտական բնույթի, ինչը ապահովում է օբյեկտների ուսումնասիրության համապարփակությունը¹²: Տվյալ դեպքում պետականն իրենից ենթադրում է պարտադիրություն, իսկ անկախը՝ օժանդակություն: Եվ ինչպես երևում է վերոգրյալից, քաղաքականություն մշակելիս, հաշվի է առնվել երկու տեսակի իրացման կարևորությունն ու արդյունքում փորձ արվել ապահովելու դրանցից յուրաքանչյուրի կիրառումը:

Գիտական հանրույթը կարող է կարևոր դերակատարում ունենալ կոռուպցիոն ռիսկեր պարունակող նախագծերի կամ արդեն ընդունված նորմատիվ իրավական ակտերի բացահայտման և դրանով պայմանավորված՝ դրանց ժամանակին կանխարգելման կամ վերացման հարցում: Ուստի, այդ ներուժից պետք է օգտվել և այս գործողության շրջանակում արդյունավետ համագործակցություն ստեղծել հակակոռուպցիոն փորձաքննություն իրականացնող լիազոր մարմնի և այդ գործընթացում ներգրավված համալսարանների միջև:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն աշխատանքի շրջանակում կատարված վերլուծությունները՝ առաջարկում ենք՝

1. Իրավական ակտերի հակակոռուպցիոն գնահատումը կազմակերպել հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման շրջանակներում՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով հակակոռուպցիոն փորձաքննությունը սահմանելով որպես փորձաքննության ինքնուրույն տեսակ, ինչպես նաև այդ օրենքով սահմանել լիազորող նորմ, որի շրջանակում Կառավարությունը կկարողանա ընդունել հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման ընթացակարգային հարցերը կարգավորող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ:

2. Հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման համար առաջարկվում է ստեղծել առանձին մասնագիտացված անկախ մարմին:

3. Անհրաժեշտ է սահմանել այն իրավական ակտերի շրջանակը և/կամ դրանց ընտրության չափանիշները, որոնք ենթակա կլինեն հակակոռուպցիոն փորձաքննության: Միևնույն ժամանակ, առաջարկում ենք դրանց շրջանակը պայմանավորել ոչ թե պետաիրավական փորձաքննության ենթակա ակտերով, այլ այն ռիսկերով, որոնք կարող են առաջանալ կարգավորման առարկա հանդիսացող հարաբերությունների ծագման, փոփոխման, դադարման

¹² Տե՛ս *Стебенева Е.В.*, Антикоррупционная экспертиза нормативных правовых актов и их проектов как мера предупреждения правонарушений должностных и иных лиц, Вестник Санкт-Петербургского университета МВД России, № 1 (97), 2023, էջ 2:

ընթացքում:

4. Գիտական հանրույթը կարող է կարևոր դերակատարում ունենալ կոռուպցիոն ռիսկեր պարունակող նախագծերի կամ արդեն ընդունված նորմատիվ իրավական ակտերի բացահայտման և դրանով պայմանավորված՝ դրանց ժամանակին կանխարգելման կամ վերացման հարցում: Ուստի, այդ ներուժը պետք է խելամիտ օգտագործել և արդյունավետ համագործակցություն ստեղծել պետական այն մարմնի, որը կիրականացնի հակակոռուպցիոն փորձաքննություն և այդ գործընթացում ներգրավված բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև:

Ամփոփագիր: Սույն հոդվածի շրջանակներում քննարկվել է ՀՀ իրավական համակարգում հակակոռուպցիոն փորձաքննության ներդրման և կիրառման անհրաժեշտությունը: Վերլուծվել է ոլորտին առնչվող ներկա իրավիճակը, որի արդյունքում առաջարկվել է հակակոռուպցիոն փորձաքննությունը սահմանել որպես փորձաքննության ինքնուրույն տեսակ, ինչպես նաև օրենքով սահմանել լիազորող նորմ, որի հիման վրա կընդունվի հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման ընթացակարգային հարցերը կարգավորող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ: Բացի այդ, հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման համար առաջարկվել է ստեղծել առանձին մասնագիտացված անկախ մարմին, սահմանել այն իրավական ակտերի շրջանակը և/կամ դրանց ընտրության չափանիշները, որոնք ենթակա կլինեն հակակոռուպցիոն փորձաքննության: Միաժամանակ, ցանկալի արդյունքի հասնելու համար առաջարկվել է արդյունավետ համագործակցություն ստեղծել հակակոռուպցիոն փորձաքննություն իրականացնող մարմնի և այդ գործընթացում ներգրավված բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև:

Annotation. Within the framework of this article, the need to introduce and apply anti-corruption expertise in the RA legal system was discussed. The current situation in relation to the field was analyzed, as a result of which we proposed to define the anti-corruption examination as an independent type of examination at the law level, as well as to establish an authorizing norm by law, within the framework of which a sub-legislative normative legal act regulating the procedural issues of anti-corruption examination will be adopted. In addition, for the implementation of anti-corruption examination, we have proposed to create a separate specialized independent body, to define the scope of the legal acts and/or the criteria for their selection, which will be subject to anti-corruption examination. At the same time, in order to achieve the desired result, we proposed to create effective cooperation between the state body that will carry out anti-corruption expertise and the higher education institutions involved in that process.

Аннотация. В рамках данной статьи обсуждается необходимость внедрения и применения антикоррупционной экспертизы в правовой системе РА. Нами проанализирована современная ситуация в сфере, и предложено определить антикоррупционную экспертизу как самостоятельный вид экспертизы на уровне закона, а также установить уполномочивающую норму законом, в рамках которой будет принят подзаконный нормативный правовой акт, регулирующий процессуальные вопросы проведения антикоррупционной экспертизы. Кроме того, для осуществления антикоррупционной экспертизы нами предложено создать отдельный специализированный независимый орган, определить объем правовых актов и/или критерии их отбора, которые будут подлежать антикоррупционной экспертизе. При этом для достижения желаемого результата мы предложили наладить эффективное взаимодействие между государственным органом, осуществляющим антикоррупционную экспертизу, и высшими учебными заведениями, вовлеченными в этот процесс.

Բանալի բառեր – հակակոռուպցիոն փորձաքննություն, կոռուպցիոն գործոններ, հայեցողություն, չափանիշներ, գիտական հանրույթի դերակատարում:

Keywords: anti-corruption expertise, corruption factors, discretion, criteria, role of the scientific community.

Ключевые слова: антикоррупционная экспертиза, коррупционные факторы, усмотрение, стандарты, роль научного сообщества.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Антикоррупционная экспертиза нормативных правовых актов и проектов нормативных правовых актов: памятка, М., Генеральная прокуратура Российской Федерации, 2019 г., <https://www.arhcity.ru/data/2397/ekspertize.pdf> /ссылка доступна на 21.08.2023/:

2. Anti-Corruption Assessment of Laws "Corruption proofing", South East Europe 2020, Jobs and Prosperity in a European Perspective, https://rai-see.org/wp-content/uploads/2015/06/Comparative_Study_Methodology_on_Anticorruption_Assessment_of_Laws.pdf /the link is available as of 21.08.2023/:

3. «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1205-Ն որոշումը, ընդունված՝ 22.10.2009 թ., ՀՀՊՏ 2009.11.04/55(721), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=54520> /հասանելի է 21.08.2023թ. դրությամբ/:

4. «Կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը, ժամկետները և դեպքերը, դրա արդյունքում տրվող եզրակացությանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման Հավելվածի կետ 3-ը, հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=148376> /հասանելի է 21.08.2023 թ. դրությամբ/:

5. Стебенева Е.В., Антикоррупционная экспертиза нормативных правовых актов и их проектов как мера предупреждения правонарушений должностных и иных лиц, Вестник Санкт-Петербургского университета МВД России № 1 (97) 2023:

6. Нащёкина Е.В., Значение антикоррупционной экспертизы в процессе формирования региональной нормативной правовой базы в дальневосточном федеральном округе, Вестник Хабаровского государственного университета экономики и права. 2020. № 1–2 (102–103):

7. OECD/ACN second round of monitoring, Kazakhstan, Monitoring report 29 September 2011, www.oecd.org/countries/kazakhstan/48908325.pdf /հասանելի է 21.08.2023 թվականի դրությամբ/

8. «Հայաստանի հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, <https://www.e-draft.am/projects/5986> /հասանելի է 21.08.2023 թվականի դրությամբ/:

9. «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ընդունված՝ 31.10.2003թ., <https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021> /հասանելի է 21.08.2023 թվականի դրությամբ/:

Ամիրյան Կ. - ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու, էլ. հասցե՝ amiryankaren@gmail.com:

Ստեփանյան Ա. - ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության փորձագետ, էլ. հասցե՝ anna.stepanyan.st@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 05.09.2023 թ., տրվել է գրախոսության 05.09.2023 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դասախոս, դոցենտ Հ. Մարտիրոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.01.2024 թ.: